https://doi.org/10.46991/SL/2023.97.035

ԶՈՐԱՀԱՎԱՔԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Համլետ Հարությունյան
ՀՀ գլխավոր դատախազության վարչության դատախազ,
ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի հայցորդ

Ներածություն

Սույն հոդվածում քննարկվում են ռազմական դրության պայմաններում հայտարարվող զորահավաքային զինվորական ծառայության զորակոչված անձանց սոցիալական ապահովության խնդիրները Սահմանադրության սոցիալական ապահովության իրավունքի համատեքստում: Հետազոտության արդիականությունը հատկապես ընդգծվեց 2020 թվականի սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին ադրբեջանական կողմի սանձազերծած պատերազմական գործողությունների, այդ ժամանակահատվածում հայտարարված զորահավաքի և նշված գործողություններին ներգրավված անձանց կողմից բարձրացվող խնդիրների հաշվառմամբ:

Բազմաթիվ քաղաքացիներ, ներգրավվելով զորահավաքային զինվորական ծառայության, զրկվում էին իրենց աշխատավարձը ստանալու հնարավորությունից, ինչի հետևանքով նրանք կանգնում էին սոցիալական բազմաթիվ բարդությունների առջև: Հոդվածում վերհանված են ոչ միայն նշված գործնական խնդիրները, այլև դրանց առաջացման պատճառ հանդիսացող օրենսդրական թերի կարգավորումները, բերված են միջազգային փորձի օրինակներ, քննարկված են սոցիալական պաշտպանության սահմանադրական իրավունքի և առհասարակ սոցիալական պետության գաղափարի ներքո այդ խնդիրների կարգավորման անհրաժեշտության հետ կապված հարցեր: Արդյունքում փորձ է կատարվել ներկայացնել քննարկվող խնդիրների լուծման հստակ առաջարկներ:

§1. Զորահավաքային զինվորական ծառայության զորակոչված քաղաքացիների աշխատավարձի պահպանման խնդիրը սոցիալական պաշտպանության սահմանադրական իրավունքի համատեքստում

ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունն ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է:

Սահմանադրության 83-րդ հոդվածը նախատեսում է սոցիալական ապահովության իրավունք՝ սահմանելով, որ յուրաքանչյուր ոք, օրենքին համապատասխան, ունի մայրության, բազմազավակության, հիվանդության, հաշմանդամության, աշխատավայրում դժբախտ պատահարների, խնամքի կարիք ունենալու, կերակրողին կորցնելու, ծերության, գործազրկության, աշխատանքը կորցնելու և այլ դեպքերում սոցիալական ապահովության իրավունք:

Սոցիալական պետության գաղափարն իր արտացոլումն է գտել նաև զինվորական ծառայության հետ կապված հարաբերություններում: Օրինակ, պետությունը զորակոչիկներին, զինծառայողներին, պարտադիր ժամկետային զինծառայողների մերձավոր ազգականներին ապահովում է անվճար բժշկական օգնությամբ, դժբախտ պատահարների պարագայում նախատեսում է թե՛ զինծառայողներին,

թե՛ նրանց ազգականներին տրամադրվող աջակցության ծրագրեր, որոշակի պայմանների համապատասխանող զինծառայողների տրամադրում է բնակարաններ, բնակարանային պայմանների բարելավման հնարավորություններ և այլն:

Սոցիալական պաշտպանության իրավունքն ամրագրված է նաև ռազմական դրության իրավական ռեժիմի պայմաններում զորահավաքային զինվորական ծառայության ներգրավվող անձանց և նրանց ընտանիքների անդամների մասով:

Օրինակ, «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ զինվորական ծառայությունը, ի թիվս այլնի, ներառում է նաև զորահավաքային զինվորական ծառայությանը ներգրավումը:

Նույն օրենքի 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ զինծառայողների դրամական ապահովությունը զինծառայողների նյութական ապահովության և նրանց կողմից ծառայողական պարտականությունների կատարումը խթանելու միջոց է, իսկ 2-րդ հոդվածի համաձայն՝ զինծառայողների դրամական ապահովությունն իրականացվում է «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված սկզբունքներին և հիմնական պայմաններին համապատասխան: Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածով զինծառայողների դրամական ապահովությունը սահմանող դրույթները տարածվում են նաև զորահավաքային զորակոչի միջոցով զինվորական ծառայություն անցնող զինծառայողների վրա:

Այսպիսով, ստացվում է, որ պետությունը պատերազմի ժամանակ մոբիլիզացված կամ զորահավաքային զինվորական ծառայության ներգրավված անձանց ճանաչում է զինծառայող և օրենքով սահմանում նաև նրանց դրամական ապահովությունն իրականացնելու կարգավորում:

Նշված նորմն ըստ էության դրական է և լիովին տեղավորվում է Սահմանադրությամբ ամրագրված սոցիալական պետության գաղափարի ներքո, սակայն հատկապես 2020 թվականի սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին տեղի ունեցած պատերազմական գործողությունները, այդ ընթացքում իրականացված զորահավաքը ցույց տվեցին, որ նշված ոլորտում կարգավորումներն ունեն որոշակի խնդիրներ:

Սույն հոդվածում քննարկելու ենք զորահավաքային զինվորական ծառայության զորակոչված անձանց սոցիալական որոշ խնդիրների հետ կապված հարցեր, որոնց արդիականությունը, հատկապես հաշվի առնելով Հայաստանի Հանրապետությունում առկա իրավիճակը, գտնում ենք, անքննելի է: Դա պայմանավորված է նաև նրանով, որ ներկայում Հայաստանում իրականավցող վարժական հավաքները առավել պարբերական են դարձել, իսկ հոդվածում քննարկվող խնդիրները հավասարապես կարող են վերաբերել նաև վարժական հավաքների ներգրավված անձանց:

Այսպես, նշվեց, որ զորահավաքային զինվորական ծառայության ներգրավված անձանց դրամական ապահովությունն իրականացվում է «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված սկզբունքներին և հիմնական պայմաններին համապատասխան: Այսինքն, ստացվում է, որ, օրինակ, սպայական կոչում չունեցող և շարքային կազմի մեջ ընդգրկված զորահավաքային զինծառայողը ստանալու է այն նույն գումարը, որը ստանում է պայմանագրային զինվորական ծառայություն անցնող անձը:

Ցավալիորեն պետք է արձանագրել, որ ներկայում շարքային կազմի զինծառայողների աշխատավարձն այնքան էլ բարձր չէ, ինչն ինքնին երկրի առջև դրված կարևորագույն մարտահրավերներից է, քանի որ, մեր կարծիքով, երկրի պաշտպանությունն իրականացնող և նման բարդ մասնագիտություն ունեցող անձանց վարձատրությունը պետք է էապես տարբերվի, օրինակ, ոչ ռազմականացված մարմին-

ների աշխատակիցների աշխատավարձից, սակայն խնդիրն ավելի է ընդգծվում զորահավաքային զինվորական ծառայություն անցնող անձանց պարագայում:

Մեր կարծիքով՝ պայմանագրային զինվորական ծառայություն անցնող և զորահավաքային զինվորական ծառայության զորակոչված անձանց միջև առկա առաջին և հիմնական տարբերությունը կամարտահայտությունն է. եթե պայմանագրային զինծառայողի համար ծառայությունը մասնագիտական աշխատանք է, գիտակցված ընտրություն, ապա զորահավաքային զինվորական ծառայության զորակաչված անձինք շատ դեպքերում չեն ունենում ազատ կամարտահայտության հնարավորություն, քանի որ հայտարարված զորահավաքի պայմաններում անձանց զորակոչը կրում է պարտադիր բնույթ:

Հենց այս պարագայում էլ հատկապես սրվում է նման անձանց պատշաճ վարձատրության խնդիրը: Բանն այն է, որ քաղաքացիները, որոնք կարող են ունենալ տարաբնույթ մասնագիտություններ, կատարել տարբեր աշխատանքներ և դրան համապատասխան ունենալ աշխտանքի ամենատարբեր վարձատրություն, զորահավաքային զինվորական ծառայության զորակոչվելուց հետո զրկվում են իրենց աշխատանքը կատարելու հնարավորությունից, ինչով պայմանավորված՝ նաև դրա դիմաց վարձատրությունից:

Ինչպես նշվեց, պետությունը զորահավաքային զինվորական ծառայություն անցնող անձանց համար նախատեսել է դրամական ապահովություն տրամադրելու հնարավորություն, սակայն կարևոր է ընդգծել, որ քաղաքացին, որը զորակոչվում է զորահավաքային զինվորական ծառայության, շատ դեպքերում կարող է ունենալ զինծառայողի համար նախատեսված աշխատավարձը մի քանի անգամ գերազանցող աշխատավարձ, ուստի իր առօրյա ծախսերը՝ երեխաների ուսում, ավելի մեծ սպառողական ծախսեր, վարկային պարտավորություններ և այլն, պլանավորել և բաշխել ըստ իր եկամտի:

Ներկայում նշված հարցի կապակցությամբ առկա կարգավորումը, որը նախատեսված է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 124-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով, գործատուներին պարտավորեցնում է պահպանել միայն զորահավաքային զինվորական ծառայության զորակոչված աշխատողի աշխատատեղը, իսկ այդ ժամանակահատվածի վարձատրության մասով սահմանվում է, որ գործատուի կողմից աշխատողի վարձատրությունը որոշվում է կողմերի համաձայնությամբ կամ կոլեկտիվ պայմանագրով, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:

Այսպիսի կարգավորումը, իհարկե, հասկանալի է, քանի որ պետությունը չի կարող որևէ գործատուի պարտավորեցնել նույն չափով վարձատրություն տալ աշխատանքային պարտականությունները չկատարող անձի՝ հատկապես հաշվի առնելով այն, որ գործատուի վճարունակությունը կարող է ուղղակիորեն կախված լինել հենց աշխատողի կողմից աշխատանքը կատարելուց, կամ աշխատողի վարձատրությունը կարող է լինել գործարքային և կախված լինել այդ ուղղությամբ իրականացված գործողությունների քանակից և այլն:

Մյուս կողմից էլ, ինչպես նշվեց, սոցիալական պետությունը, որը ստանձնել է իր քաղաքացիների սոցիալական պաշտպանությունն իրականացնելու պարտավորություն, չի կարող պարզապես հղում կատարել զինծառայողների համար նախատեսված աշխատավարձը վճարելուն և համարել, որ դրանով կարգավորել է իրենց կամքից անկախ զինված ուժեր զորակոչված և դրա արդյունքում հնարավոր ֆինանսական բարդությունների առջև կանգնող քաղաքացիների սոցիալական ապահովության խնդիրը: Խոսքն այն քաղաքացիների մասին է, որոնք կատարում են Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը մասնակցելու իրենց սահմանադրական պարտավորությունը: Ստացվում է, որ քաղաքացիները կատարում են սահմանադրական իրենց պարտավորությունը, իսկ պետությունը չի ձեռնարկում բավարար միջոցներ նրանց պատշաճ վարձատրություն տրամադրելու ուղղությամբ՝ դրանով իսկ լիովին չկատարելով սահմանադրական սեփական պարտավորությու-

նը: Համապատասխան լուծումներ չտրվելու դեպքում ստացվում է իրավիճակ, երբ մարդու իրավունքների պաշտպանությունը հակադրվում է պետության պաշտպանությանը, ինչն անթույլատրելի է, քանի որ դրանով կարող է խախտվել մարդու իրավունքների և պետության պաշտպանության միջև ողջամիտ հավասարակշռման կշեռքի նժարը. պետության պաշտպանությունը պետք է ոչ թե հակադրվի, այլ փոխլրացնի ու հավասարակշռի մարդու իրավունքները:

Մեր կողմից միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ առկա չէ նշված հարցի լուծման միասնական տարբերակ. յուրաքանչյուր պետություն յուրովի է փորձել լուծումը գտնել (կան նաև պետություններ, որոնք ունեն հայաստանյան կարգավորումներին նույնաբովանդակ նորմեր):

Մեր կարծիքով՝ խնդրի լավագույն լուծումը տվել է Շվեյցարիան. գործատուն պարտավոր է պարտադիր զինվորական կամ պաշտպանական ծառայության կամ համայնքային ծառայության պատճառով աշխատանք կատարելու հնարավորություն չունեցող աշխատողին տրամադրել աշխատավարձ՝ պայմանով, որ աշխատանքային հարաբերությունները տևել են երեք ամսից ավելի կամ կնքվել են երեք ամսից ավելի «սահմանափակ ժամանակով». վաստակի կորստի փոխհատուցումը պետք է լրացվի այն աշխատավարձի 80 տոկոսով, որն աշխատողը ստացել է ծառայությունից առաջ:

Զինվորական ծառայություն, պաշտպանական ծառայություն կամ համայնքային ծառայություն կատարող անձինք իրավունք ունեն ստանալու վաստակի կորստի փոխհատուցում (1952 թվականի սեպտեմբերի 25-ի Դաշնային օրենք եկամուտների փոխհատուցման մասին, SR 834.1): Շահույթի կորստի փոխհատուցումը սովորաբար վճարվում է աշխատողին: Գործատուին փոխհատուցում է տրվում հետևյալ դեպքերում. եթե ծառայության ժամանակահատվածի համար աշխատողին վճարված գումարը հավասար կամ ավելին է կորցրած եկամտից, գործատուն ստանում է ամբողջական փոխհատուցում, եթե ծառայության ժամանակահատվածի համար աշխատողին վճարված գումարը պակաս է կորցրած եկամտից, գործատուին վճարվում է աշխատողին տրված գումարի չափով փոխհատուցում, իսկ աշխատողին տրվում է կորցրած եկամտի և փաստացի ստացված գումարի տարբերությունը[1]:

2017 թվականի ապրիլի 12-ին «Lexology» համաշխարհային իրավական հետազոտական հարթակում հրապարակված հոդվածի համաձայն՝ ուժի մեջ է մտել «Ուկրաինայի Նախարարների կաբինետի 2015 թվականի մարտի 4-ի թիվ 105 որոշման[2] մեջ փոփոխություններ կատարելու մասին» 2015 թվականի մարտի 4-ի թիվ 254 որոշումը, որը հաստատում է գործատուների կողմից 2014-2015 թվականներին այն աշխատողներին վճարված միջին աշխատավարձի փոխհատուցման կարգը, ովքեր (i) զորակոչվել են ակտիվ զինվորական ծառայության. (ii) հատուկ ժամկետով զորակոչվել են բանակ զորահավաքային զինվորական ծառայության կամ պայմանագրով ծառայության են անցել ազգային անվտանգությանը սպառնացող ծայրահեղ իրավիճակում կամ ռազմական դրության ընթացքում[3]:

Շրի Լանկայի «Մոբիլիզացիայի և լրացուցիչ ուժերի մասին» օրենքով սահմանվում է, որ յուրաքանչյուր գործատու պետք է վճարի սկզբնական ծառայության, պահեստային ծառայության կամ մոբիլիզացիոն ծառայության անցած յուրաքանչ-

---

[1] Տե՛ս “MERKBLATT ÜBER DEN SCHUTZ DES ARBEITSVERHÄLTNISSES BEI MILITÄRDIENST, SCHUTZDIENST UND ZIVILDIENST”, հասանելի է գերմաներեն, հետևյալ հղմամբ՝ https://www.vtg.admin.ch/content/vtg-internet/de/mein-militaerdienst/dienstleistende/sold-eo/_jcr_content/infotabs/items/dokumente/tabPar/downloadlist/downloadItems/176_1672993579202.download/merkblatt_arbeitsverhaeltnis_militaer_010100_de.pdf, 5-6 էջեր:

[2] Որոշումը հետևյալ հղումով՝ https://cutt.ly/OwYbRloE

[3] https://www.lexology.com/library/detail.aspx?g=95001e5d-1a83-4975-a9a5-c066682610ad

յուր աշխատողի աշխատավարձը, վարձատրությունը և հավելավճարները: Պետությունը գործատուին վերադարձնում է աշխատավարձը, վարձատրությունները, նպաստները և վճարումները, որոնք այդ ժամանակահատվածում կատարել է այդպիսի գործատուն[1]:

Մեծ Բրիտանիայի կառավարության պաշտոնական կայքէջում հրապարակված «Գործատուի ձեռնարկ. մարդկային ռեսուրսների հետ աշխատանքի ուղեցույց/պահուստային քաղաքականություն» վերտառությամբ ուղեցույցը մանրամասն նկարագրում է, թե ովքեր են զորակոչված անձինք, ինչ գործողություններ պետք է կատարեն ընկերությունները նրանց աջակցելու նպատակով և այլն: Նշված ձեռնարկում սահմանվում է նաև, որ «Պաշտպանության նախարարությունը ստանձնելու է պահեստազորայինի աշխատավարձը վճարելու պարտավորությունը նրանց զորահավաքի ընթացքում: Նրանց կվճարվի հիմնական աշխատավարձ՝ ըստ պահեստազորայինի զինվորական կոչման: Եթե այն պակաս է, քան պահեստազորայինը ստանում է ընկերությունից, պահեստազորայինի պարտականությունն է տարբերության համար դիմել Պաշտպանության նախարարություն՝ նրանց վաստակի կորուստ չունենալն ապահովելու համար: Դրանք անվանվում են Ֆինանսական աջակցություն և Պահեստայինների պարգևներ»[2]:

Մեծ Բրիտանիայի կառավարության պաշտոնական կայքէջում առկա է նաև «Պահեստազորայինների և գործատուների իրավունքներն ու պարտականությունները» անվանմամբ էջը, որում զետեղված հայտարարության համաձայն՝ գործատուները կարող են պահանջել ֆինանսական աջակցություն, եթե աշխատակիցը կանչվել է պահեստազոր: Նշվում է, որ գործատուները չպետք է վճարեն զորակոչվածների աշխատավարձը կամ կենսաթոշակը, քանի դեռ նրանք բացակայում են. Պաշտպանության նախարարությունը վճարում է այդ ծախսերը[3]:

Ինչպես երևում է վերը ներկայացված օրինակներից, տարբեր երկրներ յուրովի են մոտեցել խնդրի լուծմանը, միևնույն ժամանակ, կան երկրներ, որոնք չեն նախատեսում նման կարգավորումներ, և զորահավաքային զինվորական ծառայության զորակոչված անձանց վարձատրության հարցը, ինչպես Հայաստանում, թողնված է գործատուների հայեցողությանը:

Մյուս կողմից հասկանալի է կարգավորումների տարբերությունը՝ պայմանավորված երկրի տնտեսական վիճակով և ֆինանսական դրությամբ: Բացի դրանից, կարևոր հանգամանք է այն, որ հատկապես պատերազմական գործողությունների ընթացքում երկրի բոլոր ռեսուրսներն (և իհարկե առաջնահերթ՝ ֆինանսականը) ուղղվում են պետության պաշտպանության գործին, ինչի պայմաններում էապես նվազում են պետության ֆինանսական հնարավորությունները:

Հասկանալով վերը թվարկվածը՝ այնուամենայնիվ հարկ ենք համարում նշել, որ զորահավաքային զինվորական ծառայություն անցնող անձանց պատշաճ վարձատրություն տրամադրելը ոչ միայն սոցիալական պետության գաղափարի, այլ նաև հենց պետության պաշտպանողունակության ամրապնդման խնդիր է. ծառայություն անցնող անձը պետք է հնարավորինս քիչ մտահոգված լինի առօրյա խնդիրներով և զինված ուժերի կազմում իր պարտքը կատարելիս մտածի ոչ թե, օրինակ, վարկային պարտավորությունների, այլ իր առջև դրված ռազմական խնդիրների կատարման մասին:

---

[1] Mobilization And Supplementary Forces Act (No. 40 of 1985) - Sect 22, “Right to return to previous employment at end of period of service”, հասանելի է հետևյալ հղումով՝ http://www.commonlii.org/lk/legis/num_act/masfa40o1985448/s22.html

[2] Ուղեցույցը հասանելի է հետևյալ հղումով՝ https://assets.publishing.service.gov.uk/media/5a801d7040f0b623026919a5/Employers_Handbook-APR2015.docx

[3] https://www.gov.uk/employee-reservist/financial-support-for-employers

Այդ իսկ պատճառով գտնում ենք, որ պետությունը չպետք է սահմանափակվի զորահավաքային զինվորական ծառայության զորակոչված անձանց պայմանագրային զինծառայողների համար նախատեսված աշխատավարձը վճարելով և վարձատրության մասով գործատուներին պարզապես հայեցողություն տրամադրելով՝ առանց հաշվի առնելու անհատական դեպքերը՝ աշխատանքի բարձր վարձատրություն, դրան համարժեք ծախսեր, վարկային պարտավորություններ, բուժման ծախսեր և այլն:

Հետևաբար, առաջարկվում է օրենսդրական մակարդակով կատարել փոփոխություններ և մշակել զորահավաքային զինվորական ծառայության զորակոչված անձանց աշխատանքի վարձատրության փոխհատուցման ուղղությամբ ձեռնարկվող միջոցների համակարգ, որը հաշվի կառնի թե՛ զորահավաքային զինվորական ծառայություն անցնող անձանց անհատական դեպքերը, թե՛ գործատուների աշխատանքի անխափանության ապահովումը, թե՛ պետության ֆինանսական հնարավորությունները. օրինակ, սկզբնապես պետությունը կարող է ոչ թե ուղիղ և ամբողջական փոխհատուցում տրամադրելու օրենսդրական պարտավորություն ստանձնել, այլ շահագրգռել գործատուներին հնարավորինս պահպանել զորահավաքային զինվորական ծառայության ներգրավված անձանց աշխատավարձը՝ սահմանելով փուլային սուբսիդավորման ծրագրեր, զորահավաքային զինվորական ծառայության զորակոչված քաղաքացիներին աշխատավարձը վճարող գործատուներին տրամադրելով հարկային արտոնություններ, իրականացնելով եթե ոչ ամբողջական, ապա աշխատավարձի մի մասի միանվագ սուբսիդավորում և այլն: Իհարկե, ցանկալի արդյունքն այն է, որ պետությունը նման միջոցներ ձեռնարկի զորակոչված բոլոր քաղաքացիների մասով և ի վերջո կարողանա հասնել վերևում նշված երկրների օրինակին, սակայն, կրկին հաշվի առնելով երկրի ֆինանսական դրությունը, առաջին հերթին պետությունը կարող է սուբսիդավորման նման ծրագրեր նախատեսել միայն հստակ չափանիշների համապատասխանող անձանց մասով (օրինակ, երբ քաղաքացին ներկայացնում է վարկային կամ այլ տեսակի պարտադիր պարտավորությունների չափի և դրանց կատարման անհնարինության վերաբերյալ ապացույցներ):

§2. Զորահավաքային զինվորական ծառայության զորակոչված քաղաքացիների վարկային պարտավորությունների կատարման խնդիրը

Զորահավաքային զինվորական ծառայության զորակոչված քաղաքացիների ֆինանսական խնդիրների մասին խոսելիս մեր կողմից վերևում մի քանի անգամ ընդգծվել են վարկային պարտավորությունները, ինչը պատահական չէ:

Այս խնդիրը նույնպես ցայտուն ընդգծվեց վերջին շրջանում, երբ քաղաքացիները զորակոչվում էին զորահավաքային զինվորական ծառայության (իսկ այնուհետև նաև՝ վարժական հավաքների), որոշ դեպքերում զրկվում պետության կողմից տրամադրվող վարձատրությունը մի քանի անգամ գերազանցող աշխատավարձից և կանգնում վարկային պարտավորությունների կատարման խնդիրների առջև:

Այս խնդիրն արձանագրվել է նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից: Վերջինս, մասնավորապես՝ նշել է հետևյալը. «Մարդիկ բողոքներ են ներկայացրել նաև վարժական հավաքների ներգրավելու դեպքում վարկային պարտավորությունների հետ կապված: Վարժական հավաքների ներգրավված զինծառայողները հայտնել են, որ զորակոչվելուց առաջ բոլոր իրավասու մարմիններին տեղեկացրել են վարկային պարտավորությունների մասին, սակայն հարցը չի լուծվել, պարտավորությունները պահպանվել են, ներկայում ևս բանկերն ու վարկային կազմակերպությունները պահանջում են վճարել վարկերը: Մարդու իրավունքների

պաշտպանը տվյալ հարցը նույնպես համապատասխան գրությամբ ներկայացրել է Պաշտպանության նախարարություն»[1]:

Նշված հարցի կապակցությամբ ևս մենք կատարել ենք միջազգային փորձի ուսումնասիրություն, ինչի արդյունքում պարզվել է հետևյալը. Ամերիկայի Միացյալ Նահանգներում 2003 թվականին ընդունվել է «Զինծառայողների քաղաքացիական աջակցության մասին» օրենք, որով հետաձգվում կամ դադարեցվում են քաղաքացիական որոշակի պարտավորություններ, որպեսզի զինծառայողները կարողանան իրենց ամբողջ ուշադրությունն ուղղել իրենց պարտականություններին և թեթևացնել իրենց ընտանիքների բեռը:

Նշված օրենքը մի շարք կարգավորումներ է նախատեսում, օրինակ, վարձակալած բնակարանների վարձակալությունների պայմանագրերը ծառայության ընթացում լուծելու, վաղաժամ լուծման համար տույժերից ազատվելու, որոշակի դատական գործերի հետաձգման և մի շարք այլ քաղաքացիաիրավական հարաբերություններում զինծառայողների առավելությունների մասով:

Օրենքի 207-րդ հոդվածը սահմանում է, որ զինվորական ծառայություն անցնելու ընթացքում զինծառայողների պարտքերի մասով հաշվարկվող տոկոսագումարը չի կարող գերազանցել տարեկան 6 տոկոսը, իսկ վերցված պարտքի ավել տոկոսը պարտատերը «ներում» է:

Նույն օրենքի 203-րդ հոդվածի «Բ» մասի համաձայն՝ եթե զինծառայողը չի կատարում պայմանագրից բխող պարտավորությունը, և այդ չկատարման հետևանքով առաջանում է տույժ, դատարանը կարող է նվազեցնել կամ հանել տուգանքը կամ տույժը, եթե՝ 1) տուգանքը կամ տույժը նշանակելու պահին զինծառայողը եղել է զինվորական ծառայության մեջ. և 2) զինծառայողի պարտավորությունը կատարելու կարողության վրա էականորեն ազդել է այդպիսի զինվորական ծառայությունը[2]:

Ամերիկայի Միացյալ Նահանգներում, իհարկե, օրենսդրությունը տարբերվում է ըստ նահանգների: Օրինակ՝ Նյու Ջերսիի § 38:23C-23.1 ստատուտը սահմանում է, որ այս նահանգում բնակություն հաստատած անձը, որը մոբիլիզացված է դաշնային ակտիվ ծառայության՝ որպես Ազգային գվարդիայի անդամ կամ Միացյալ Նահանգների Զինված ուժերի պահեստային բաղադրիչ, կարող է իր հայեցողությամբ ստանալ հիփոթեքային վարկի տոկոսների և մայր գումարի վճարման հետաձգում մինչև դաշնային ակտիվ ծառայության ավարտը[3]:

2022 թվականի սեպտեմբերի 28-ին Ռուսաստանի պետական դուման ընդունել է «Ռուսաստանի Դաշնության զինված ուժեր զորահավաքային զինվորական ծառայության զորակոչված անձանց, հատուկ ռազմական գործողությանը մասնակցող անձանց, ինչպես նաև նրանց ընտանիքների անդամների կողմից վարկային պայմանագրերով նախատեսված պարտավորությունների կատարման առանձնահատկությունների և Ռուսաստանի Դաշնության որոշ օրենսդրական ակտերում փոփոխություններ կատարելու մասին» օրենքը:

Այս օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ վարկառուն իրավունք ունի վարկային պայմանագրի գործողության ընթացքում ցանկացած պահի, բայց ոչ ուշ, քան մինչև 2023 թվականի դեկտեմբերի 31-ը, կապ հաստատել փոխատուի հետ՝ սույն հոդվածին համապատասխան փոխելու պայմանագրի պայմանները՝ նախատեսելով վար-

---

[1] «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում», 2021, էջ 1037, հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.ombuds.am/images/files/022666474d87ff84a86acf39be58bec8.pdf

[2] «Զինծառայողների քաղաքացիական աջակցության մասին» օրենքն անգլերենով հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.govinfo.gov/content/pkg/PLAW-108publ189/pdf/PLAW-108publ189.pdf

[3] Ստատուտն անգլերենով հասանելի է հետևյալ հղումով՝ https://shorturl.at/zQSU9

կառուի կողմից արտոնյալ ժամկետով իր պարտավորությունների կատարման կասեցում, որը հաշվարկվում է հետևյալ կերպ. 1) զորահավաքի ժամկետը կամ պայմանագրային ժամկետը ավելացվել է 30 օրով, 2) հատուկ ռազմական գործողությանը մասնակցելու ժամկետը ավելացվել է 30 օրով:

Նույն օրենքի 3-րդ հոդվածը սահմանում է, որ 2-րդ հոդվածով սահմանված արտոնյալ ժամկետը երկարաձգվում է այն ժամանակահատվածի համար, երբ վարկառուն, սույն հոդվածի 1-ին մասի 1-3-րդ կետերի համաձայն, գտնվում է հիվանդանոցներում, հոսպիտալներում և այլ բժշկական հաստատություններում՝ ստացիոնար պայմաններում՝ հատուկ ռազմական գործողության ընթացքում առաջադրանքները կատարելիս ստացված վնասվածքներից (վերքեր, վնասվածքներ, կոնտուզիա) կամ հիվանդություններից ապաքինվելու համար[1]:

Հայաստանի Հանրապետության ներպետական օրենսդրության ուսումնասիրությունից պարզվել է, որ մեր երկրում առկա չեն ոչ միայն վերը ներկայացված օրինակներին նման, այլև առհասարակ օրենսդրական կարգավորումներ, որոնք որևէ կերպ անդրադարձ կկատարեին ռազմական դրության պայմաններում զորահավաքային զինվորական ծառայության զորակոչված անձանց վարկային պարտավորությունների կատարման հարցին: Ընդ որում, հարկ ենք համարում նշել, որ խնդիրն արդիական է նաև քաղաքացիական այլ պարտավորությունների դեպքում՝ բնակարանների վարձակալության վճարի տրամադրման անհնարինութուն, տարաբնույթ պայմանագրերով ստանձնած պարտավորություններ և այլն. այս մասով ևս սոցիալական պետությունը պետք է որոշակի քայլեր ձեռնարկի, սակայն այս հոդվածի քննարկման առարկան հատկապես վարկային պարտավորություններն են:

Արդարության համար անհրաժեշտ է նշել, որ «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածով սահմանվում են այն միջոցառումները և ժամանակավոր սահմանափակումները, որոնք կարող են իրականացվել ռազմական դրություն հայտարարվելու դեպքում ռազմական դրության ամբողջ ժամկետի ընթացքում, և նշված հոդվածի 1-ին մասի «զ» կետով ամրագրված է հետևյալը. «Ռազմական դրության իրավական ռեժիմին համապատասխանող ֆինանսական, վարկային, հարկային, մաքսային, սահմանային և բանկային պետական հատուկ քաղաքականության իրականացում, ֆինանսատնտեսական գործունեության առանձին տեսակների, ներառյալ՝ ծառայությունների մատուցման, ապրանքների և ֆինանսական միջոցների շրջանառության սահմանափակումներ»:

Նշված նորմի վերլուծությամբ հնարավոր է դառնում եզրակացնել, որ, ըստ էության, Կառավարությունը, որը ռազմական դրության պայմաններում իրականացնում է տարաբնույթ միջոցառումներ, նշված նորմի շրջանակներում կարող է նաև միջոցներ ձեռնարկել վարկային պարտավորությունների քաղաքականության իրականացման հետ կապված, այդ թվում՝ կարգավորել նաև զորակոչված անձանց կողմից վարկային պարտավորությունների կատարմանը վերաբերող հարցեր:

Այնուամենայնիվ, այդպիսի լուծումը, մեր կարծիքով, չի կարող բավարար լինել սոցիալական պաշտպանության սահմանադրական իրավունքի և սոցիալական պետության գաղափարի ապահովման տեսանկյունից:

Կրկին քաջ գիտակցելով մեր երկրի ֆինանսական, տնտեսական և սոցիալական խնդիրները՝ գտնում ենք, որ սոցիալական հռչակված պետությունը չի կարող իր քաղաքացուն միայնակ թողնել քննարկման առարկա դարձած խնդիրների առջև՝ հատկապես հաշվի առնելով այն, որ քաղաքացիներն այդպիսի խնդիրների բախվում են ոչ թե սեփական սխալների կամ թերի աշխատանքի կամ ոչ պատշաճ ջանասիրություն ցուցաբերելու, այլ իրենց կամքից անկախ ակտիվ զինվորական ծառայության զորակոչվելու հետևանքով:

[1] Օրենքը ռուսերենով հասանելի է հետևյալ հղումով՝
http://actual.pravo.gov.ru/text.html#pnum=0001202210070001

Հետևաբար, գտնում ենք, որ անհրաժեշտ է օրենսդրորեն ամրագրել զորահավաքային զինվորական ծառայության զորակոչված քաղաքացիների վարկային պարտավորությունների կատարման եթե ոչ ամբողջական կասեցման, ապա առնվազն այդպիսի պարտավորությունների բացասական հետևանքների նվազեցմանն ուղղված կարգավորումներ, մասնավորապես՝ զորահավաքային զինվորական ծառայություն անցնելու ժամանակահատվածում և զինվորական ծառայություն անցնելու հետևանքով չկատարված վարկային պարտավորությունների համար տույժերի և/կամ տուգանքների բացառում, նույն պատճառով պարտավորությունները չկատարած անձանց ՀՀ ֆինանսների նախարարի և ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2021 թվականի մարտի 30-ի թիվ 39-Ն համատեղ որոշմամբ նախատեսված «անհուսալի» դասով (այսպես ասած՝ «սև ցուցակ») դասակարգման բացառում կամ նույն պատճառով չկատարված վարկային պարտավորությունների կատարումը զորահավաքային զինվորական ծառայությունից զորացրվելուց հետո որոշակի ժամանակահատվածում փուլ առ փուլ կատարելու հնարավորության ամրագրում կամ զորահավաքային զինվորական ծառայություն անցնելու ժամանակահատվածի համար վարկերի տոկոսագումարի զգալի նվազեցում կամ պետության կողմից, կրկին, անհատական որոշ հանգամանքների հաշվառմամբ՝ պարտավորությունների եթե ոչ ամբողջ, առնվազն մի մասի սուբսիդավորում: Ներկայացված առաջարկները, իհարկե, սպառիչ չեն, սակայն մեր կարծիքով առնվազն այսպիսի կարգավորումներ օրենքով ամրագրելն արդեն իսկ խնդրի կարգավորման ճանապարհին կլինի զգալի առաջընթաց:

Եզրակացություն

Սոցիալական պետության գաղափարը լայն իմաստով ներառում է սոցիալական արդարության, քաղաքացիների բարեկեցության և սոցիալական պաշտպանվածության մասին հոգ տանելու, մարդկանց արժանավայել կյանքով ապահովելու պետության պարտավորությունները: Այդ ուղղությամբ պետության կողմից ձեռնարկվող միջոցները դրսևորվում են տարաբնույթ հարաբերություններում և չեն կարող սահմանափակվել պարզապես այս կամ այն խոցելի խմբի առանձնացմամբ և միայն այդպիսի խմբերի իրավունքների պաշտպանությանն ուղղված կարգավորումների սահմանմամբ. պետությունն այդպիսի ջանքեր պետք է գործադրի ցանկացած հարաբերությունում, որոնք այս կամ այն կերպ առչնություն ունեն մարդու և քաղաքացու կյանքի որակի, բարեկեցության, ապրուստի միջոցների, կենսամակարդակի և այլ սոցիալական բաղադրիչների հետ: Այդպիսի միջոցներ պետք է ձեռնարկվեն նաև մոբիլիզացված անձանց սոցիալական պաշտպանության իրավունքի ապահովման ուղղությամբ՝ հատկապես հաշվի առնելով այն, որ այդ քաղաքացիները ծառայության են ներգրավվում իրենց կամքից անկախ՝ կատարելով պետության պաշտպանության իրենց սահմանադրական պարտականությունը:

Պետությունը պետք է հաշվի առնի, որ զորահավաքային զինվորական ծառայության կարող են ներգրավվել տարաբնույթ մասնագիտություններ, աշխատանք և աշխատավարձ ունեցող անձինք, ովքեր իրենց առօրյան կազմակերպել են իրենց ստացած աշխատանքի վարձատրությանը համապատասխան: Հակառակ պարագայում մարդու իրավունքների պաշտպանությունը կհակադրվի պետության պաշտպանությանը, ինչն անթույլատրելի է. մարդու իրավունքներն ու պետության պաշտպանությունը պետք է ոչ թե հակադրվեն, այլ փոխլրացնեն միմյանց: Իրեն սոցիալական հռչակած պետությունը պետք է պատշաճ ջանասիրություն ցուցաբերի մոբիլիզացված անձանց սոցիալական հոգսերը, դրա հետևանքով առաջացող բարդությունները նվազագույնի հասցնելու ուղղությամբ՝ խթանելով գործատուների կողմից աշխատավարձի պահպանումը, ինչպես նաև ամրագրելով մոբիլիզացված քաղաքացիների որոշ քաղաքացիական պարտավորությունների կատարման անհնարինությունը բացառող կարգավորումներ:

Օգտագործված գրականության ցանկ

1. «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենք (Law of the Republic of Armenia "On Military Service and the Status of Servicemen".), համարը՝ ՀՕ-195-Ն, սկզբնաղբյուրը՝ ՀՀՊՏ 2017.12.06/73(1348) Հոդ.1209, ընդունվել է 15.11.2017թ.,

2. «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենք (Law of the Republic of Armenia "On the Legal Regime of Martial Law"), համարը՝ ՀՕ-258-Ն, սկզբնաղբյուրը՝ ՀՀՊՏ 2007.01.17/4(528) Հոդ.27, ընդունվել է 05.12.2006թ.,

3. Նյու Զերսիի § 38:23C-23.1 ստատուտ, անգլերեն, հասանելի է հետևյալ հղումով՝ https://shorturl.at/zQSU9,

4. «Ռուսաստանի Դաշնության զինված ուժեր զորահավաքային զինվորական ծառայության զորակոչված անձանց, հատուկ ռազմական գործողությանը մասնակցող անձանց, ինչպես նաև նրանց ընտանիքների անդամների կողմից վարկային պայմանագրերով նախատեսված պարտավորությունների կատարման առանձնահատկությունների և Ռուսաստանի Դաշնության որոշ օրենսդրական ակտերում փոփոխություններ կատարելու մասին» օրենք ("Law on the specifics of the fulfillment of the obligations provided by credit agreements by the conscripts of the Russian Armed Forces, persons participating in a special military operation, as well as their family members and on making changes in some legislative acts of the Russian Federation"), ռուսերեն, հասանելի է հետևյալ հղումով՝ http://actual.pravo.gov.ru/text.html#pnum=0001202210070001

5. «Ուկրաինայի Նախարարների կաբինետի 2015 թվականի մարտի 4-ի թիվ 105 որոշում» (Decision No. 105 of the Cabinet of Ministers of Ukraine dated March 4, 2015), հղում՝ https://cutt.ly/OwYbRloE,

6. “Mobilization And Supplementary Forces Act (No. 40 of 1985) - Sect 22, “Right to return to previous employment at end of period of service”, հասանելի է հետևյալ հղումով՝ http://www.commonlii.org/lk/legis/num_act/masfa40o1985448/s22.html,

7. «The Servicemembers' Civil Relief Act», անգլերեն, հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.govinfo.gov/content/pkg/PLAW-108publ189/pdf/PLAW-108publ189.pdf,

8. «Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք», գիրք առաջին, 6-րդ լրամշակված հրատարակություն, Պատասխանատու խմբագիր՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ն. Ա. Այվազյան, Երևան, Տիգրան Մեծ, 2016,

9. «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում» (Annual report on the activities of the RA human rights defender, the state of protection of human rights and freedoms), 2021, հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.ombuds.am/images/files/022666474d87ff84a86acf39be58bec8.pdf

10. Մեծ Բրիտանիայի կառավարության պաշտոնական կայքէջում հրապարակված «(Employers’ handbook. HR guidance/Reserve Policies» վերտառությամբ ուղեցույց, https://assets.publishing.service.gov.uk/media/5a801d7040f0b623026919a5/Employers_Handbook-APR2015.docx,

11. Մեծ Բրիտանիայի կառավարության պաշտոնական կայքէջում առկա «Rights and responsibilities for reservists and employers» էջի հղում՝ https://www.gov.uk/employee-reservist/financial-support-for-employers,

12. «Lexology» համաշխարհային իրավական հետազոտական հարթակում հրապարակված հոդվածի հղում՝ https://www.lexology.com/library/detail.aspx?g=95001e5d-1a83-4975-a9a5-c066682610ad,

13. «MERKBLATT ÜBER DEN SCHUTZ DES ARBEITSVERHÄLTNISSES BEI MILITÄRDIENST, SCHUTZDIENST UND ZIVILDIENST», հասանելի է գերմաներեն, հետևյալ հղմամբ՝ https://www.vtg.admin.ch/content/vtg-internet/de/mein-militaerdienst/dienstleistende/sold-eo/_jcr_content/infotabs/items/dokumente/tabPar/downloadlist/downloadItems/176_1672993579202.download/merkblatt_arbeitsverhaeltnis_militaer_010100_de.pdf:

ПРОБЛЕМЫ МОБИЛИЗАЦИИ В КОНТЕКСТЕ КОНСТИТУЦИОННОГО ПРАВА НА СОЦИАЛЬНОЕ ОБЕСПЕЧЕНИЕ

Гамлет Арутюнян
Прокурор Генеральной прокуратуры РА,
соискатель кафедры конституционного права ЕГУ

В ходе военных действий, развязанных азербайджанской стороной в сентябре-ноябре 2020 года, были выявлены некоторые социальные проблемы лиц, проходящих мобилизационную военную службу, необходимость регулирования которых вытекает не только из конституционного права на социальную защиту, но и от идеи самопровозглашенного социального государства.

Цель данного исследования - вывести социальные проблемы мобилизованных граждан, показать международный опыт по решению таких проблем, недостатки отечественного законодательства, соотношение практических проблем и законодательных норм и, как следствие, представить четкие предложения по решению этих проблем в контексте идеи социального государства и конституционного права на социальную защиту.

В результате обсуждения был сделан вывод, что в отечественном законодательстве отсутствуют не только положения предусматривающие возможность сохранения заработной платы лиц, проходящих мобилизационную военную службу, но и предоставляющие возможности устранения или сокращения невозможности исполнения некоторых гражданских обязанностей граждан во время прохождения мобилизационной военной службы, а также устранения или сокращения возможных негативных последствий, вытекающих из этого. В результате было предложено на законодательном уровне закрепить такие нормы с учетом индивидуальных случаев каждого гражданина, проходящего мобилизационную воинскую службу по призыву, при введении таких норм учитывать финансово-экономическое положение государства, а также не пренебрегать необходимостью бесперебойной работы работодателей, сотрудники которых были призваны на военную службу.

THE ISSUES OF MOBILIZATION IN THE CONTEXT OF THE CONSTITUTIONAL RIGHT TO SOCIAL SECURITY

Hamlet Harutyunyan
Prosecutor at the Prosecutor General's Office RA,
PHD Student at the YSU Chair of Constitutional Law

During the military actions unleashed by the Azerbaijani side in September-November 2020, some social problems of persons undergoing mobilization military service were identified, the need for regulation of which stems not only from the constitutional right to social protection, but also from the idea of a self-proclaimed social state.

The purpose of this study is to emphasize the social problems of mobilized citizens, show international experience in solving such issues, the shortcomings of domestic legislation, the relationship between practical problems and legislative norms and, as a result, present clear proposals for solving these problems in the context of the idea of a social state and the constitutional right to social protection.

As a result of the discussion, it was concluded that in the domestic legislation there are no provisions not only providing for the possibility of maintaining the wages of persons undergoing mobilization military service, but also providing opportunities to eliminate or reduce the impossibility of fulfilling certain civil duties of citizens during mobilization military service, as well as eliminating or reducing possible negative consequences arising from this. As a result, it was proposed to consolidate such norms at the legislative level, taking into account the individual cases of each citizen undergoing mobilization military service; when introducing such norms, take into account the financial and economic situation of the state, and also not neglect the need for uninterrupted work of employers whose employees were called up for military service.

Բանալի բառեր – *զորահավաք, սոցիալական պետություն, սոցիալական պաշտպանություն, աշխատավարձ, վարկային պարտավորություններ, զինվորական ծառայություն, պատերազմական գործողություններ:*
Ключевые слова: *мобилизация; социальное государство; социальная защита; зарплата, кредитные обязательства; военная служба; военные действия.*
Key words: *mobilization; social state; social protection; salary, loan obligations; military service; hostilities.*